

Թեանց մէջ, յորս լիովին կարող է գաննել
Հիտաբբբիր ընթերցասէրն:

(Նորոշիչ)

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԷՍԼԱՆՉՍՅ. ՈՒՐԱՅՈՂԱՅ,
ՀԵՐՁՈՒԱՅՈՂԱՅ ԵՒ ՐԱԺԱՆԵԼՈՅ ՅԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԷԱՅՈՅ.

ՅԼՈՒԱԶԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Զպատմութիւն Հայածջաց Եկեղեցոյն Հայոց
ուրացողաց, հերձուածողաց և բաժանելոց՝ գրե-
ցաք մեր հետեւելով աղօցոյն պատմաբանից մե-
րոց՝ Խորենացոյն և Յովհաննու Վաթուղիկոսի
բաղդատութեամբ ընդ Չամչեանն կոչեցեալ պատ-
մագրութեան, որպէս և զԹողոլոց Եկեղեցոյն Հա-
յոց իրև առաջին հատոր սորին հանդերձ Եկե-
ղեցական կանոնագրութեանըն, ըստ զխակարգու-
թեանց Աղիւսակին Միքայէլ Արքեպիսկոպոսի
Սալլանդեան՝ կոչեցեալն ի նմանէ Պատմութիւն
Եկեղեցոյն Հայոց յաղիւսակս համառօտեար տը-
պապրեալ ի Մոսկով յամի 1841, որ է ցանկ մի-
այն զխակարգութեանց պատմութեանս որպէս
և ժողովոցն Վաթուղիկոսաց, թագաւորաց նա-
հատակաց և թարգմանչաց, բովանդակելոց ի վից
աղիւսակս զորոց ամենից զպատմութիւնսն յանձն
առեալ ենք գրել ըստ այսմ կարգի եթէ Տէր
յաջողեցե՛ք մեզ յետ այսորիկ մաքրելով զամե-
նեցուն անցս ի սուտակասպաս և ի պատուատեալ
պատմագրութեանցն Չամչեան, որ զանուն գնելով
այնմ եռահատոր մատենի Պատմութիւն Հայոց
ստուարացուցեալ է զայնս գրեթէ բովանդակ ստու-
թեամբ բանից ի հաճոյս Հռոմայ ընդ դէմ ստու-
գրութեան գրուածոց նախնացն մերոց մատե-
նադրաց և պատմաբանից, և այս յաւետ ի վեպս
պատմութեան անցից Վաթուղիկոսաց Ազգիս ի
յետին դարս որոց եկեղեցական կառավարութիւն
ազգի մերոյ եղեալ է ընդ տեսութեամբ և ընդ ի-
րաւասութեամբ պատկն Հռոմայ շինուածոյ թըղ-
թոց և ինքնահնար նամակաց յանուն Վաթուղի-
կոսաց Ազգիս որոց և ոչ հետք երևին առ ազ-
գային պատմադիրս և ոչ ի զիւանս Վաթուղիկոսաց
մերոց:

Այս եղև մեզ առիթ զխաւոր գրելոյ զՊատ-
մութիւն Եկեղեցոյս մերոյ ի վից առանձին դիրս
ըստ վիցից աղիւսակաց Սալլանդեան Միքայէլի՝ որ-
պէս ասացաք, յորոց նախ զերկուս զայստսիկ զպատ-
մութիւն Թողոլոց և զպատմութիւն Հայածջաց
Եկեղեցոյն Հայոց զխաւորելով, զչորեակն ևս
ըստ այսմ կարգի գրել ունիմք Տեառն յաջողու-
թեամբ յետ այսորիկ, եթէ ձեռնտու լիցի մեզ և
ժամանակն:

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հայոց Եկեղեցոյն հայաժողով, սրբապետ,
հերձուածող բաժանեալ, բռնաորդ, ևլն:

ՅՕԿ. Ա.

Անուն է Սնորոշիչ ինքնորդ հալածիչ:

(Եմք Տեառն 34): Ենանէ որդի Աբ-
գարու յետ մահու հօրն թագաւորէ Հա-
յոց Աղեւսիս. և Սանատրուկ քեռորդի
Աբգարու հակառակ Ենանեայ՝ ի Շա-
ւարշան. և նախարարք Հայոց թողեալ
զհաւատս և ոչ անագան ի կռապաշտու-
թիւն դարձեալք, յայն շրջեցին և զմիտս
Սանատրիկոյ՝ մերժելով զօրէնս քրիս-
տոնէութեան, յոր ինքեանք յիկիւղէ
Աբգարու կեղծաւորութեամբ առ երեսս
զառաջինն հաւատացեալքն էին:

Այսպէս և Ենանեայ զքրիստոսական
հաւատն թողեալ, բանայ զտաճարս կը-
ռոցն Աղեւսիս և խորհէ բառնալ ըզ-
Փրկչական պատկերն որ ի վերայ դրան
քաղաքին, դժկամակեալ ընդ դործս Ժո-
ղովրդեան որք ի պատիւ պատկերին կան-
խէին: Այլ Աղդէ եպիսկոպոսի աստուա-
ծային յայտնութեամբ իրացն կանխագէտ
լեալ, յանյայտս ծածկէ յորմն ի զիշերի
զատուածային պատկերն. առ որ և խոր-
հուրդ թագաւորի ի մտացն անկանէր
յաստուածային խնամոց:

Եւ սա ինքն Անանէ յետ այսորիկ հրամայէ զսրունս ոտիցն հատանել սըրբոյն, յաղագս ոչ առնելոյ նմա խոյր ինքեան, որպէս և հօրն իւրում Աբգարու. բայց և այնպէս որով մահուա՛ր և ըզսուրբն եբարձ ի կենաց, նովին և ինքն վճարէր զկեանս. զի ի նորոգութեան ապարանից իւրոց յԱդիսիա, սիւնն մեծ կճեայ, առ որով Անանէ կայր ի զնին, հոսեալ ի վերայ և խորտակեալ մանրեալ զոտս նորին՝ սպանանէ զնա ի չորրորդ ամի թագաւորութեան իւրում:

Իսկ Սանատրկոյ՝ որ հաւատացեալ էր ի Վրիստոս և մկրտեալ ի Թադդէոսէ, և թողեալ զնոյն յետ Աբգարու ի հրապուրանաց նախարարացն իւրոց ըստ Յովհանն. Կաթուղիկոսի՝ երդուեալ բնակչաց Ադիսիոյ յետ մահուն Անանեայ մի՛ մեղանչել ի քրիստոնէութիւն նոցին, առնու գբաղաքն, և ստիրդումն գտեալ ուխտին, ի սուր հանէ զամենայն զաւակ տանն Աբգարու բաց յաղջկանց և ի դշխոյէն. և լուեալ զբարձ գեսպանաց շոովմայեցւոց առ ինքն արանց հնգից ի Վրիստոսական հաւատս, որոց զխաւորի Ոսկի ճանաչելը անուն ի ձևուն Թադդէոսի առաքելոյ ի սահմանս Միջագետաց, կոչէ առ ինքն ի Շաւարշան զառաքեալն սուրբ և սպանանէ զնա անդ, ընդ որում և զսուրբ կոյն Սանդուխտ զգուստր իւր վասն հաստատուն կալոյ նորա ի հաւատս Վրիստոսի ուսեալ ի սրբոյ առաքելոյն:

Ի սքանչելիս անդ նահատակութեան կուսին Սանդխտոյ դստերն իւրոյ, այն ինչ հաւատայ ի Վրիստոս նախարարն մեծ Աստուէլ կոչեցեալ, զչարեալ ընդ այն Սանատրկոյ բեւոս հրոցեայս վարսէ յուս

նորա, որ կատարեցաւ ի Վրիստոս յիշատակեալ Յայմաւաւուրս ի 23. դեկամ. ընդ սմին սպան արքայ Սանատրուկ և զտիկինն մեծ Օւարմանդուխտ անուն ընդ նորայնոցն ամենեցուն ոգւոց իբրև երկիրիւրոց, որք հանդերձ տիկնամբն հաւատացեալ ի սմին ժամանակի մկրտեցան ի Վրիստոս:

Եւ զի յայսմ ժամանակի Ռարդուղեմէոս առաքեալ ևս դիմեալ ի Ստորին շայս յաշխարհ Անձևացեաց ընդ իւրունելով զպատկեր սուրբ Աստուածածնի նկարեայն ի Յովհաննու Աւետարանչէ, քարոզութեամբ աւետարանին բազմացուցանէր զիկեղեցիս Վրիստոսի և հաստատէր ի հաւատս զամենեսին զնոսա. յորս և զքոյր Սանատրկոյ զթագուհին և զհազարապետ նորին: Սոյն Սանատրուկ կալեալ զքոյր իւր, սպան զնա և զառաքեալն սուրբ մորթ ընդ զլուխն հանեալ խաչեաց յԱրևբանոս քաղաքի ի խորին շայս յաշխարհին Կորճէից, ուր թաղեցաւ սուրբ առաքեալն. զայս քաղաք Արևբանոս, ուր նահատակեցաւ սուրբ առաքեալն, Յովհ. կաթուղիկոս կոչէ Արաբէնոն:

Եյսպէս Սանատրկոյ հալածող լեալ եկեղեցւոյն շայոց ի Վրիստոսական հաւատոյն յրնթացս երեսուն և չորից ամաց թագաւորութեան իւրոյ, յետ վերջասին դարձին իւրոյ ի կապաշտութիւն ի սկզբան թագաւորութեան իւրոյ հեծեալ ի կամս նախարարաց՝ մեռանի նետահարեալ յանդէտս ի ծառայէն, ի գբօսանս որսոց, յամի Տեառն 67, ոչ ինչ զերևելիս ցուցեալ ի կեանս. ըստ որոյ և ոչինչ յիշատակաց արժանի համարեցաք, սակ խորենացին:

807. Բ.

Արտատպութիւնը Նոր-Երուսաղէմի Պրինտինգը:

(Ամբ Տեառն 107): Թոռն Սանատրկոյ
Արտաւազդ երկրորդ որդի Արտաշեսի Բ.
ի վեշտասանամեայ իւրում հասակի ա-
ռիթ գտեալ զդարձ Սուքիասեանց ի Վը-
րիստոսական հաւատս ի քարոզութենէ
սրբոց Ոսկեանց յարքայական քաղաքն
Արտաշատ, նահատակէ զսուրբսն հնգեօսին
ևս ի լեառն Ծաղկէոյ ի Ծաղկոտն գա-
ւառի յակունս Ափրատայ. ի պատճառս
ազգականութեան իւրեանց ընդ Սուքիա-
սեանս ի կողմանէ մօր իւրոյ Սաթինկան,
որ զայսպիսի իմն ունի զպատմութիւն:

Յետ իբր քառասուն և երեք ամաց
սրբոյ առաքելոյն Թադէոսի կատարմանն ի
Վրիստոս նահատակութեամբ ի Սանա-
տրկոյ, աշակերտեալք սրբոյն սուրբ Սու-
կեանք հնգեքին ընկերք, որք դարձեալ էին
ի Վրիստոս յաւուրս դեսպանութեան
իւրեանց ի Հռովմայեցւոց առ Սանատ-
րուկ, աստուածային ազգեցութեամբ ի-
ջեալք ի կրօնաւորական վայրաց ի լեռնէն
Ծաղկէոյ, մտաննն առ արքայ Արտաշէս
Բ. յարքունի քաղաքն Արտաշատ, և առ
Թադուհին Սաթենիկ, քարոզել զքրիս-
տոնէութիւն և զաստուածութիւն Վը-
րիստոսի և զկոտն տկարութիւն: Այլ
արքայի ի զբազանս սպասեցանց լեալ.
Խօսին նոքա զնոյն բանս առ Սաթենիկ.
առ որում լուեալ և ազգականաց Թա-
դուհւոյն եկելոցն յԱլանաց, աշակերտե-
ցան սրբոյն հաւատացեալք ի Վրիստոս
բողոքով սրտիւ. որոց զհաստատութիւն
հաւատոցն ի Վրիստոս անսեալ սրբոյ

Ոսկի քահանային, մկրտէ ի զիշերի զա-
մենեսին զնոսա զողիս իբրև ութեատան
յակունս Ափրատայ, և ի նշան ընդունե-
լութեան նորա շնորհաց Հոգւոյն սրբոյ,
փոխեալ զանուն նոցին, առաջնոյ նոցին
անուամբ կոչեաց Սուքիասանք:

Աւ ի միւսանգամ դալ սրբոց Ոսկեանց
յարքունիս ի քարոզութիւն՝ որդիք ար-
քայի որդիք Սաթենկան իմացեալ զդարձ
ազգականաց իւրեանց, հալածեն զնոսա
Թշնամանօք ի դրանցն արքունի, ընդ որս
խոյս ետուն և նոցին աշակերտեալքն. այլ
իբրև տեղեկացան եթէ ընդ Ոսկեանսն
զնացին և նոքա, կրասեր որդիք Թադուհ-
ւոյն ընդ երիցաղոյնն Արտաւազդայ հան-
դերձ Թիկնապահօք յարձակեալ ի բնակա-
բանս սրբոցն, և տեսեալ զՍուքիասս, աղա-
չէին դառնալ յետս ի քրիստոնէութենէ,
զնոյն խնդրէին և ի սրբոց Ոսկեանց յորդոր
լինել նոցին. այլ յառաւելին պնդել նոցա
զնոսա ի հաւատսն, բարկացեալ Արտա-
ւազդայ հրամայէ արբանեկաց իւրոց առ
ետեղբ իսկ զսուրբ Ոսկեանսն խողտողել:

807. Գ.

Բարձրագոյն Պրինտինգը:

(Ամբ Տեառն 130): Սուքիասանք արք
Թադաւորազունք էին գլխաւորք ի պա-
լատական կարգէ ի զբան արքային Ալա-
նաց ոգիք իբրև ութեատան ազգականք
Սաթենկայ դստեր Թադաւորին Ալանաց,
որք հարսնածուք լեալք Սաթենկան յա-
ւուրս դշխոյանաւոյ նորին մերումս Արտա-
շեսի Բ. ի որդւոյ Սանատրկոյ, քնացեալ
ի Հայս յարքունիս անդր, աշակերտեցան
սրբոց Ոսկեանց ի հաւատս Վրիստոսի, և

մերտեալ յանուն Յիսուսի ի ձեռն սրբոյ Ասիի քահանային յակունս Ափրատայ՝ կային անդէն ի ջրաբաշև և ի ծաղկաւէտ տեղես, որոց գլխաւորի անունն կոչեալ Սուքիաս՝ որ յառաջն էր Բահադրաս կամ Բարաքաբայ, նորա անուամբ և ընկերք նորին Սուքիասանք կոչեցան:

Եւ մինչ ի պատճառս դարձի սոցին սուրբ Ասիեանքն զնահատակութիւն ընկայան ի հրամանէ Երտաւազդայ որդւոյ Սանատրկոյ ի լիբին անդ, թաղեալ անդ զմարմինս սրբոցն, և զի յայտնի խկ եղեւ այնուհետև դարձ իւրեանց ի Վրիստոս ի դուռն արքունի, և առ խոտաւէտ լինելոյ վայրացն մարմինք նոցին պարարէին, ապա յետ ոչ բազում ժամանակաց փոխեալ զընակութիւն իւրեանց՝ գան ի ջրաբաշև լեառն ի Բագրևանդ գաւառի առերի Ապատ լիբին, և յաւելան օր ըստ օրէ ի կարգ և ի հեշտակական կրօնս. որ յետոյ կոչեցաւ և լեառն՝ յանուանէ զրլխաւորի նոցին Սուկաւ, կամ առ անպարարա լինելոյ այնորիկ՝ կոչեցաւ Սուկաւ ի Հռովմէական ձայնէս Սիքքուս, այս ինքն չոր, ցամաք:

Ե. յսպէս թագնութեամբ ի լիբինս այսմիկ կրօնաւորին սոքա ամենեքին ցամ Տեառն 130, մինչև ի ժամանակս թագաւորին Ելանաց Գեղիանոսի կամ Գատիանոսի. որոյ ի գննին կարգ ի զօրս իւր՝ ստուգեալ յոմանց երթեւեկաց ի Հայս, եթէ նոքին արք յարքունի զնդէն վազ ուրեմն ընդ Սաթենկան զշոյի չուեալ յաշխարհն Հայոց, հաւատացեալ են ի Վրբիստոս և զկեանս իւրեանց վշտօք ի լիբինս անցուցանեն, ապա առաքէ զզօրավար Բառահա անուն, ի խոյղ և ի խըն-

դիր արանցն, հրաման տուեալ կամ պարգևաց խոստամամբ հաւանեցուցանել, և դարձուցանել, և կամ սրով բառնալ զնոսա ի չգալն. որոյ եկեալ ի Հայս և առաջնորդութեամբ լրտեսաց զիմեալ ի լեառն ի Սուկաւ՝ եգիտ զսուրբ Սուքիասեանսն, և իրրև յորդորանաց զօրավարին ոչ մատուցանէին ունկն և զպարգևս խոստմանցն ևս առ ոտն հարին՝ և ոչ զաշխարհային փառացն զհետ երթալ կամէին, թողեալ զփառս անանցական կենաց, ապա սուր ի վերայ եգեալ դահձաց զօրավարին կոտորեցին զամենեկնն զնոսա անդ ի լեառն ի ձգնարանս նոցին յամի Տեառն 130:

307. Գ.
 Խորհրդի լիբինս նոցին լիբինս:

(Վեք Տեառն 215): Յաւուրս Խոսրովայ առաջնոյ որդւոյ Աշաղարշայ, որ թագաւորէ Հայոց յամի Տեառն 214, գտանէին բազում քրիստոնեայք յաշխարհին Հայոց ուրեք ուրեք, սա վասն զի ձեռնարկեալ էր ի նմին ժամանակի ի շինութիւն բազում քաղաքաց, աւանից և ապարանից՝ ևս և իջևանաց, զբազումսն ի նոցանէ ի քրիստոնէիցն ածէ ի գործ շինութեանցն և ի գառն աղեւսարկութիւնըս, և զբազումս ևս նահատակէր ըստ յիշատակութեան Խորենացոյն ի Գիրք. Բ. 72, առեալ ի Փերմելիանիայ կպիսկոպոսէ Արտաբիոյ Ապագոովկացւոց՝ յաշակերտէ Որոզինայ:

Եւ բան Խորենացոյն է. «զրէ բազում վկայեար և ի Խոսրովու ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օտարք յօտարաց. բայց զի ոչ ձմարտութեամբ ոճով

պատմէ, և ոչ զանուանս նշանակէ, կամ
զտեղի կատարմանցն, ոչ ինչ կարևորա-
զոյն համարեցաք երկրորդել, Վերբ՛ւ. 75:

80Գ. Ե.

Տրդատ Բարձրագոյն և Կառավարիչ:

(Մեք Տեառն 287): Որպէս հռչակա-
ւոր է վրէժխնդրութիւն Տրդատայ ի սրբոյ
Պարիզորէ մերս Բ. 1. ուսաւորչէ յազգս
չմատուցանելոյ նորա զոհս դիցն Մնահ-
տական յԱզնկայ, առ որ յարեալ էր մե-
ծի առնն, թերևս քաւել մտադրելով
զլանցանս հօր իւրոյ ի սպասու ծառա-
յութեան Տրդատայ գտանելով հարուստ
ժամանակաւ, այնպէս հռչակագոյն ևս է
նորին ինքեան արքային Տրդատայ հրաշալի
դարձն ի քրիստոնէութիւն ի ձեռն սրբ-
բոյն Պարիզորի, յոյր ձեռն նուէրս Արտե-
մայ մատուցանել զառաջինն կամէր. ուս-
տի և հռչակաւոր և հանդիսական այս է
գործ նորին Տրդատայ. զի որում նախ
զնահատակելն հրամայէր յազգս զիցն
անարգանաց, ապա ի ձեռն նորա և ըզքը-
րիստոնէութիւնն ընկալաւ:

Ապա ըստ այսոցիկ երկուց ներհակա-
կիր գործոց՝ գասեալ լինի սուրբն Տրդատ
ըստ առաջնումն ի կարգս հալածչաց և
նահատակչաց եկեղեցւոյն Հայոց, և ըստ
երկրորդին՝ ընդ սուրբս և ընդ նահատակս
և ընդ խոստովանողս Հայոց եկեղեցւոյն:

Արդ սա ինքն Տրդատ ընկալեալ զԹա-
գաւորութիւն ի Վեոկղեօտիանոս կայսերէ
Հռովմայեցոց, առ որում քաջագործ-
եալն էր ի մանկութենէ, իբրև գայր ելանէր
յԱզնկեաց գաւառ ի Հայաստան, ի շը-
նորհս Արտեմայ վարկուցեալ զայն պա-

տիւ արքայական, զոհս զոհութեան նմին
մատուցանէ. ինոյն հրամայեալ և Պարի-
զորի փունջս ծաղկանց ի մեհեան նորին
հանել. այլ ընդ շառնուլ նորա յանձն
զայն պաշտօն առ դիսն, մեծաւ ավշու-
թեամբ զարմացեալ Տրդատայ ընդ Պարի-
զոր, զնէ զնա յարդելանս, և առ առաւել
բռնադատել զսուրբն ի պաշտօնս կոոց,
իբրև զանարգանս ևս ի նմանէ լսէ ընդ սը-
տութիւն դիցն, ապա հրամայէ մատուցա-
նել զնա ի չարչարանս տանջանաց, յիտ ո-
րոյ լուեալ, եթէ որդի է Մնակայ, առաքէ
զնա յԱրտաշատ քաղաք արկանել ի խոր-
վիրապ մահապարտաց: Սա՛ յիտ ժամա-
նակաց նահատակէ և զսուրբ կուսանսն
Հռիփսիմեանս՝ վասն խոստովանութեան
նոցին Պարիստոսական հաւատոց:

80Գ. 2.

Արեւորդի հոյ+ ի Զոհանէ Զոյն ողբելն:

(Մեք Տեառն 315): Արեւորդիք յարե-
ւապաշտութիւնէն Հայոց մնացեալք յա-
ւուրց կապաշտութեանց նոցին ի Հա-
յաստան, թէ և բարձաւ այսպիսի տար-
բապաշտութիւն Հայոց այն ինչ դարձաւ
ի քրիստոնէութիւն ընդհանուր Հայաս-
տան ի ձեռն սրբոյն Պարիզորի ի սկզբան
չորրորդ դարու քրիստոնէութեան, բայց
այսու ամենայնիւ հեռք ինչ նորա մնա-
ցին յազգս մեր ի Միջագետս. զի գեօղք
և աւանք ինչ յիզր սահմանաց Հայաս-
տանեաց խառն ի Հայոց և յօտար ազ-
գաց մնացին ի հեթանոսութեան ի ծա-
ծուկ, ընդ որս և Արեւորդիքն կոչեցեալք,
տեւալք ի մոլորութեան իւրեանց ի բա-
զում ժամանակս և մերթ ընդ մերթ
ի վեր երևեալք որպէս յաւուրս սրբոյն

Մեարովբայ, Վարիգորի Մագիստրոսի և
Ներսիսի Շնորհալոյ:

Յաւուրս Մեարովբայ ի վերջն չորրորդ
դարու ի Վոողթան գաւառի ի վեր երևէր
ազանդ Երևորդեացն, որ՝ որպէս յիշատա-
կեցաւ՝ մնացեալ ի ժամանակէ սրբոյն Տըր-
դատայ ի Հայս. զոր լուեալ Մեարովբայ, և
անդր հասեալ, ձեռնտուութեամբ Շա-
բաթ իշխանի տեղւոյն, բառնայ և արմա-
տասիլլ առնէ զայն ազանդ. ուր և նշանք
աստուածայինք լինէին (ասեն Խոր. և
Աորիւն) որպէս առ սրբոյն Վարիգորիւ,
հալածական լեալ զիւքն մարմնաւոր տես-
լեամբ՝ անկանէին ի կողմանս Մարաց:

Յետ քսան և վեց ամաց իբրև նա ինքն
Մեարովբ ի բաժնին Յունաց բացեալ ըզ-
գպրոցս, սերմանէր ի սիրտս մանկանց ե-
կեղեցւոյ զվարդապետութեան սերմունս
ի հայրենի լեզու, և ընդ նմին հալածա-
կան վարէր ի գաւառաց անտի զնոյնօրինակ
ազանդաւորս ըստ բանի Ետաիկոսի
Պատրիարքին՝ գրեալ առ սուրբն Սահակ,
կոչելով զայն՝ ազանդ Բորբորիտոնաց՝
ըւաւ դարձեալ զնոյն ազանդ ընձիւղեալ
ի Վոողթն. զոր յառաջնումն սպառ սպուռ
սրբեալ էր անտի. և առ այս վերագար-
ձեալ նորա յԵյրարատ, հասանէ անդր ի
Վոողթն. զոր և ըստ առաջնումն օրինակի
ի ձեռն իշխանի տեղւոյն Վիւտայ որդւոյ
Շաբաթայ եբարձ զնոյն չար ազանդ:

Եստանօր տեղեկացեալ ևս թէ ուսնց
յազանդաւորաց իջեալք առ Բաղասա-
կանս և առ Վարդմանականս, սփռեալ են
զմոլորութիւն այսր ազանդոյ, փութացաւ
անդ, և զորս ոչ կարաց յուղղութիւն
ածել անդ առ Բաղասականս, հալածեաց
յերկրէ նոցին. և զորս դարձոյցն, ազա-

չեաց զՆապիսիօպոս տեղւոյն զՄուշեղ
անուն, անդարձ զնոսին պահել ի գիտու-
թիւն ճշմարտութեան. նոյնպէս և առ
Վարդմանացւոց դարձոյց զազանդաւորսն
հանդերձ Խուրս անուն իշխանաւ նոցին,
որք ամենեքին սքա և Բաղասականք և
Վարդմանականք՝ ի սերնդոցն Հայկոյ
էին ¹):

(Շորհալոյ):

ԱՐԵՎԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՍՊԱՆԻՍԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(1) Չայսմանէ Աորիւն այս օրինակ բերէ ի
յիշատակ. «Առեալ այնուհետև երանելոյն (Մե-
րորայ) զհաւատացեալս իւր՝ զիմեալ իջանէր
յանկարգ և յանդարման տեղիս Վոողթան. այլ և
ընդ առջ եյանէր նմա իշխանն Վոողթան. այր
երկիւղած և աստուածասէր ըստ աշակերտաց
հաւատոցն Քրիստոսի. Իսկ երանելոյն վաղվա-
ղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ,
ձեռն արկանէր զգաւառօյն հանդերձ միամիտ սա-
տարութեամբն իշխանին . . . ի հայ-
րենեաց աւանդից, և ի սատանայական զուա-
պաշտ սպասաւորութենէն ի հնազանդութիւն
Քրիստոսի մատուցանէր. Եւ յորժամ ի նոսա
զբանն կենաց սերմանեալ յայտնի իսկ բնակչաց
գաւառին նշանք մեծամեծք երևէին կերպակերպ
նմանութեամբ զիւացն փախստական լինելով
անկանէին ի կողմանս Մարաց)»:

